

ԹՈՉՆԱՆՈՒՆՆԵՐ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ (իմաստագործատական և բառակազմական քննություն)

Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գրաբար մատենագրությունը բավարար տեղեկություններ է տալիս թռչնաճանրների, թռչուններից բնորոշ զանազան հատկանիշների, որոշ հատկանիշների հիման վրա թռչունների տարբերակման, թռչունների՝ որպես այս կամ այն խորհրդանիշի ներկայացման, թռչնաճանրների բառակազմական յուրահատկությունների և այլ իրողությունների մասին: Ծիշտ է, այս և նման կարգի տեղեկությունները ավելի հաճախական են և ընդգրկում թարգմանական գրականության մեջ, և որոշ պատկերացումներ ու ըմբռնումներ էլ թերևս օտար են, այդուհանդերձ դրանք ուշագրավ են, մանավանդ որ, հիմնականում հինգերորդադարյան վկայություններ են՝ հնագույն և հավաստի:

Քննությունը ցույց է տալիս, որ գրաբարում ավանդված թռչնաճանրներն ակնհայտորեն սակավաթիվ են, քան միջին հայերենում ավանդվածները: Այս փաստը տեսանելի է հայերենի թռչնաճանրների վերաբերող Ջ. Գրեպպինի ուշագրավ աշխատության մեջ¹:

Սա կարելի է բացատրել երկու հանգամանքով. ա) զանազան հատկանիշներով նույնական թռչունները անվանվել են մեկ կամ մի քանի ընդհանրական անուններով, այսինքն՝ տարահատկանիշ մասնավորում չի կատարվել, մի երևույթ, որ հակառակ էր միջին հայերենում, երբ բազմաթիվ նոր թռչնաճանրներ են հանդիպում՝ **թռչնաճանր+այլ հատկանիշ, ոչ թռչնաճանր+որևէ հատկանիշ** կաղապարով (իմնտ. **ջրագռու, ծովագռու, ծովորոք, ծովարծուի, ցախսարեկ, ժրահաւ, երաշտահաւ, լաշհաւ, մանգղաթև, փայտվոր** և այլն, բ) հնարավոր է, որ մի շարք թռչնաճանրներ գրաբարում պարզապես չեն վկայվել:

Գրաբարում թռչունների ընդհանրական անվանումներն են՝ **թռչուն, քեսաոր, հաւ(ք)**: Հմնտ. «Յամենայն հաւուց թռչնոց» (Ծննդ. Ջ. 20): «Իբրեւ գիաւու թռուցելոյ յօղս» (ՆՀԲ): Այս իմաստով երբեմն հանդես է գալիս **օղագնաց** բառը: Թռչունների ընտանեցունը բավական ուշ է կատարվել: Այժմ ընտանի համարվող որոշ թռչուններ գրաբարյան, հատկապես վաղ գրաբարյան վկայությունների շրջանում թերևս եղել են վայրի: Օրինակ, Փիլոնի մի վկայությունից զգացվում է, որ **սազը** դեռևս ընտանեցված չէր: «Քանզի կիբքիս, սալամունք և կաքարք և սագացն և խորդոց ազգ յանապատս փախչին...» (Փիլ. Բանք. 107): Գրաբարյան վկայություններում թռչունները տարբերակվում են ըստ որոշ հատկանիշների (ձայն, գեղեցկություն, մեծություն, բարձր թռչելու հատկություն, գիշատիչ և ոչ գիշատիչ և այլն):

Ուշագրավ մի վկայություն է բերում Բարսեղ Կեսարացին. «Եւ զկեսն հերձաթեսս անուանեցին, այսինքն՝ զարծուիս և զկեսն մաշկաթեսն, այսինքն՝ զըջիկանս գիշերոյ և զկեսն անասրաթեսս, այսինքն՝ զմեղոսս և զկեսն պատենաթեսս, այսինքն՝ խաղողեփեացս... զի կես ազգ երամ երամ միաժողով շրջին՝ իբրեւ ծիծառունք և խորոք և ճայք և խոլմուկք և սարիկք և տարմահաք: Կէսքն առանց գլխոյ և իշխանի... և կէսքն ընդ առաջնորդաւ հնազանդեալ, այսինքն՝ խորդ»: (Վեցօր. 259-260):

Առավել հաճախ ենք հանդիպում **պիղծ** (որոնց միսը ուտելի չէ) - **ոչ պիղծ** տարբերակ-

¹ J. A. C. Greppin, Classical and Middle Armenian Bird Names, New York, 1978: Այս աշխատությունը թեև նաև լեզվաբանական քննություն է (ստուգաբանական փորձեր, այլ լեզուների համապատասխանակների հետ համադրում, ձևույթային առանձնացում և այլն), սակայն հիմնական ուղղվածությամբ թռչունների նկարագրություն է (երբեմն նկարներով), թռչունների՝ կենդանաբանության մեջ ընդունված դասակարգումներ:

մանը: Այս հարցում դեր ունեն աշխարհագրական միջավայրը, ժողովրդի՝ պատմականորեն ձևավորված ավանդույթը, կրոնը և բազում այլ գործոններ: Նման կարգի մի յուրահատուկ սկզբունք է առաջարկում Եվս. Եմեսացին. «Իսկ ի թշնոց, որ յերիս մագիլսն գնան եւ յետին բիտն ի վերայ քան զայլ մագիլսն կայցէ, կանխակալ տոկորութիւնն արեւնորաց գնուս ուտել... և յայնցանէ որ ի չորս մագիլսն գնայցեն և բիտն յետին խոնարհագոյն կայցէ՝ արգելին օրէնքն ուտել, քանզի և տոկորութիւն» (Եմես. Մեկն. 127): Այս ըմբռնումը գալիս է թերևս Աստվածաշնչից, որտեղ տարբեր գրքերում շոշափվում է հիշյալ հարցը. հմմտ. «Եւ այս է, զոր ոչ ուտիցէք ի նոցանէ զարծուի, և զջայլամն, և զբու և զճայ. զսոխակ և զագոռա... (Երկ. Օր. ԺԳ 11-19): «Եւ ամենայն գեռուն թռչուն, որ գնայցէ ի չորս՝ պիղծ եղիցի ձեզ: Այլ զայն ուտիցէք ի գեռոց թռչնոց, որ գնայցեն ի չորս, որոյ իցեն կարթք ի վերոյ քան զոտս ոստոստել նօքօք յերկրէ. եւ այս իցէ զոր ուտիցէք ի նոցանէ... զօրոտակղ և որ ինչ նման է նմա և զխարագուլ... և զմարախ և զօճամարտ» (Դևտ. ԺԱ. 21-23):

Որոշ թռչուններ (աղավնի, տատրակ) մաքրության, անմեղության ու բարոյականության խորհրդանիշներ են՝ նաև կրոնական երանգավորումով:

Անդրադառնամք թռչնամուկների լեզվաբանական քննությանը:

Թռչնամուկներում արու-էգ տարբերակվածությունը միշտ չէ, որ ի հայտ է գալիս:

Մարի, էգ ընդհանուր բնորոշիչներ են, իսկ թռչունների որոշ տեսակների դեպքում համապատասխան անվանումը վերաբերում է արու թռչնատեսակին. **վարուժան, ճուռակ, արադաղ:**

Թռչնամուկների ծագումնաբանական շերտերից ամենաընդգրկունը բնիկ հայերեն բառախումբն է: Առայժմ գոյություն ունեցող հավաստի ստուգաբանությունների հիման վրա հ.-ե. են համարվում հետևյալ թռչնամուկները. **ագռա, անդանի, արծուի, արադաղ, բու, բուէճ, լոր, ծիծառն, կերկեր, կռունկ, յոպուպ, սագ, տատրակ, ցին, ուրուր:** Ավելի ընդհանուր հասկացություններ արտահայտող **թռչուն, հաւ, մարի** բառերը նույնպես հ.-ե. ծագում ունեն:

Անդրադառնամք մի քանի բառերի: Հ.-ե. «վերին աշխարհի» բնակիչների ընդհանրական անվանումը ծագում է *Hyei-ից, որից հ. հնդ. vi/ve՝ «թռչուն» ավետ. viš «թռչուն», լատ. auis «թռչուն», հայ. **հաւ**²: **Հաւ**-ը սկզբնապես ունեցել է «թռչուն», ընդհանրական իմաստը, որը հետագայում ձեռք է բերել այլ նրբիմաստներ. **ընտանի հավ** (թռչունի տեսակ), **էգ հավ, արադաղ**. հմմտ. «Չամենայն հաւ սուրբ ուտիցէք» (ՆՎԲ): «Ժողով է հաւ զճագս իւրոյ ընդ թեւովք» (Մատթ. ԻԳ. 37): «Մինչև հաւու խօսեալ իցէ» (Մատթ. ԻԶ. 34):

Հ.-ե. շատ ժողովորդներ **արծիվը** ուժի, զորության, արագընթացության խորհրդանիշ էին դիտում: Հին հնդկերենում śyená «արծիվ». բառի հետ գործածվում է ejipyá «արագաթռիչ» մակդիրը, որը համապատասխանում է իրանական լեզուներում **արծուի**-ն տրվող անվանը³: Հայկական ավանդույթներում արծիվը թռչունների արքան է՝ բարձրաթռիչ, ուժեղ և արագընթաց: Արդեն ընդունելի է համարվում այն կարծիքը, որ Ուրարտուի Մենուս թագավորի ձիու անունը՝ **Արծիբի**, հայ. **արծուի** բառն է⁴: Չիու և արծվի զուգարդությունն ենք տեսնում նաև մեր հնագույն վիպասանական հատվածներից մեկում.

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի **սեաւն** գեղեցիկ
եւ հանեալ զոսկեղ շիկափոկ պարանն
եւ անցեալ որպէս **զարծուի** սրաթեւ ընդ գետն...⁵

Մագիստրոսի քերականության մեջ կա **կանդ** «արու արծիվ». — «կանդ, որ նշանակէ միայն զարու արծուի կամ վարուժանակ և ոչ զայլ որ ի թռչնոց»⁶: Ջ. Գրեպպինը բառը կապում է պրս. kand «բաշ»-ի հետ, որն, իրոք, արծիվներին տրվող մականուն է⁷:

Կռունկ-ի զուգահեռները նույնպես անհերքելի են դարձնում բառի հ.-ե. ծագումը: Աճառյանը այն ծագած է համարում *ger «գոչել» բնածայնական արմատից: Ըստ Է. Աղայանի,

² Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, стр. 537. Հաւ բառի համար Գ. Ջահուկյանը նշում է հ.-ե. [Hauo-s] զուգահեռը (Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1987, էջ 114):

³ Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 539:

⁴ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 341, 443:

⁵ Մովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց, Երևան, 1981, էջ 212:

⁶ Տե՛ս Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петр-д., 1915, էջ 240:

⁷ J. Grepin, նշվ. աշխ., էջ 49:

«հայերենը նույն արմատից ունի երկու թռչունի անուն՝ կերկեր և կռունկ, ինչպես որ լատիներենը՝ grus «կռունկ», graculus «արջմագռավ», լիտվաներենը՝ garmys «ճայ», gervi «կռունկ»⁸։ Գ. Ջահուկյանը կռունկ-ի համար բերում է *géron. g գուգահեռը⁹։ Նշենք, որ կերկեր թռչանունը թեև բառարանները ավանդում են, բայց վկայություն չկա։

Անգղ- Արմատական բառարանում ստուգաբանված է։ Գ. Ջահուկյանը բխեցնում է հ.-ե. *ang «ծռել» արմատից (թռչունի կտուցը կեռ լինելու համար)¹⁰։ Ղարաբաղի բարբառում **անգ** «անգղ» ավելի է հաստատում կապը հ.-ե. նշված ձևի հետ, մյուս կողմից՝ բարբառային ձևը ավելի հին է, քան գրաբարյանը, որը լեզվական ուշագրավ երևույթ է։

Աղանի, տաարակ, լոք բառերի հ.-ե. ծագումը նույնպես հիմնավորվում է¹¹։ **Ագռա, բու, յոյոպ** համարվում են բնածայնական բառեր, և բերվում են համապատասխան հ.-ե. գուգահեռները¹²։

Գրաբարում ավանդված բազմաթիվ թռչնանուններ էլ փոխառյալ են այս կամ այն լեզվից։ Չնայած իրանական լեզուներից հայերենի կրած մեծ ազդեցությանը, թռչունների իրանական անվանումները փոքրաթիվ են։ Վաղ գրաբարում գործածական են **արմա, բազէ, սարեակ, սիրամարգ, վարուժան**, ուշ շրջանից՝ **բառ, կաչաղակ, թութակ, շահեն** «բազէ», **ճուռակ** «բազէի տեսակ», **իշորմուռ**։ Վերջիցները ոչ հաճախական կիրառություն ունեն։

Թեև Աճառյանը, ըստ էության, անվերապահորեն ընդունում է **սարեակ**-ի իրանական ծագումը (տե՛ս Արմ.), սակայն հ.-ե. K'er, K'or, K'r արմատը անյերթելի չի դարձնում բառի բնիկ հայերեն լինելը։ Ի դեպ, Գ. Ջահուկյանը, **սարեակը** դնելով իրանական փոխառությունների ցանկում, այդուհանդերձ հարցականով նշում է նրա բուն հ.-ե. բնույթը¹³։ Իսկ Ջ. Գրեպպինը **սարիկ**-ը դիտում է որպես իրանական, իսկ **սարեկ**-ը՝ հ.-ե. *k'er- արմատից¹⁴։ Մարգ «թռչուն» անկախաբար չի կիրառվում, այլ՝ **լորամարգ, սիրամարգ** բառերի մեջ։ Ինչ վերաբերում է **արամագը** թռչնանվանը (ըստ Արմ.-ի «մի տեսակ թռչուն»), ապա բնագրային ու բանասիրական այլ կարգի քննությունից պարզվում է, որ այդպիսի թռչնանուն չկա և Այգեկցու առակներում (որին հղում է Արմ.-ը) նկատի է առնված Արամագը աստվածը¹⁵։

Վարուժանը Արմատական բառարանում կասկածանքով է համարվում իրանական փոխառություն, որովհետև «մայրը հայտնի չէ»։ Ստուգաբանական նոր փաստերը հիմնավորում են բառի իրանական բնույթը¹⁶։

Նկատելի է, որ իրանական փոխառություններում առկա է **բազէ** թռչնանվան հոմանիշային շարք՝ **բազէ, գառագ, ճուռակ, շահեն**։ Անշուշտ, սրանք փոխառվել են տարբեր ժամանակային կտրվածքներում և նրբերանգային մի առանձնահատկություն են դրսևորում՝ արտահայտելով (թեև ոչ բոլոր վկայված օրինակներում) բազեն որպես որսորդ թռչուն։ **Բազէկիր, բազէակալ** կազմություններն էլ դարձյալ որսորդությանը վերաբերող բառեր են։ Հունարենից կատարված փոխառությունները նույնպես քիչ են. **թքիա, եփենե, իբիդ, կիկոս, տիտոս, տրոքիդոս, փակոն, փասիան, փինիկ, քարաղք, քսիսի**։ Սրանք հաճախական չեն, վկայված են հիմնականում քարգմանական գրականության մեջ, և գիտակցվում են որպես օտար բառեր։ Փոքր ի շատե «հայկական» երանգ են ստացել **փասիան, փինիկ և քարաղք** թռչնանունները։ Վերջինս վկայված է Աստվածաշնչում և ուշ շրջանի մի քանի այլ գործերում։

Մեծական փոխառությունների շարքում կարելի է տարբերակել Աստվածաշնչի եբրայական թռչնանունները՝ **ասիդ, արսին, նետու, նեղաս**։ սրանք վկայված են մեկական անգամ։ Ասորերենից են՝ **կաքա, պապկայ, ջաղեան**։ **Պապկայ** վկայված է V դարից. այդ թռչունի մասին որոշ տեղեկություններ կան և Կանոնկառվացու Պատմության մեջ։ Ջ. Գրեպպինը բառը համարում է արաբական փոխառություն¹⁷։ Սակայն V դարից վկայված լինելու հանգամանքը մերթելի է դարձնում այս փաստարկը և ընդունելի Արմ.-ի ասորական փոխա-

⁸ Է. Աղայան, Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 83։

⁹ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 125։

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 412։

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 111, 134, 151, 197։

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 114, 122, 125։

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 208։

¹⁴ J. Creppin, նշվ. աշխ., էջ 189։

¹⁵ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 222-223։

¹⁶ Տե՛ս A. Периханян, Материалы к этимологическому словарю древнеармянского языка, Ереван, 1993, էջ 68-70։

¹⁷ Տե՛ս J. Creppin, նշվ. աշխ., էջ 142։

նություն համարելը: Միջինհայերենյան շրջանից որպես հոմանիշ սկսում է գործառել **քու-քակ** բառը, որը իրանական փոխառություն է: **Սաքալուկ**-ը թեև Արմատականում ստուգաբանված չէ, սակայն, մեր կարծիքով, բառի ասորական բնույթը կասկած չի հարուցում: Ահա վկայված օրինակը. «Որպես ծիծառանց և այլոց թռչնոց, որ անուամեալ կոչին մաքալուկք, որք յօղոց զմանրամաղ իրս ինչ թուղեալ բերեն ի դարման իրեանց պիտոյից» (Վեցօր. 258): Ամենայն հավանականությամբ բառը ունի նույն արմատը, ինչ որ **մանգաղ** բառը, իսկ վերջինս ասորական փոխառություն է. maggəā (հնագույն ձևը՝ *mangəā)¹⁸:

Ուշադրության է արժանի և այն փաստը, որ «Վեցօրեայից», բերված օրինակում **մաքալուկը** համապատասխանում է հուն. δρεπώνισ, որը ծագում է δρέπωνον «մանգաղ» բառից (Արմ): Նկատենք նաև, որ այս բառի միջինհայերենյան անվանումն է **մանգալաքե**, որը, ըստ Ջ. Գրեյպիհի, վկայված է Հովհաննես վարդապետի տաղերում.

Մանկղաթեին պիսի խղճալ
Ինքն չկարեր նստել ի վայր...¹⁹

Մանգալի հետ կապը, ըստ երևույթին, այդ թռչունի քերի մանգաղաձև լինելն է:

Մի շարք թռչնանունների ծագումը ստույգ չէ. **անծեղ**, **ասպունակ**, **արտոյտ**, **արօս**, **աբար**, **թոնձ**, **կատակ**, **ճայ**, **դրի**, **չիղջ**, **պասկուն**, **սակո**, **սոխակ**, **փոք**, **փաղ**... Մրանցից **կատակ**, **սոխակ**, **կարապ** բառերի համար կարելի է ենթադրել իրանական ծագում, որը հիմնավորելու համար, սակայն, նոր փաստեր են պետք:

Թռչնանունների բառակազմական յուրահատկությունները

Ըստ բառակազմական յուրահատկությունների գրաբարի թռչնանունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

Ա) **Արմատական** (կամ որպես այդպիսին գիտակցվող) բառեր. **հաւ**, **անգղ**, **ցին**, **սագ**, **սաիդ**, **իբիդ**...

Բ) **Արմատ+այլ ձևույթ**: Այդ ձևույթներից են.

-ակ- **ասպունակ**, **թուքակ**, **կատակ**, **ճուռակ**, **ջորեակ**, **սոխակ**, **վարուժնակ**, **տատրակ**...

-ի- **աղանի**, **արծուի**, **մարի**, **լորամարգի**...

-իկ- **ճայիկ**, **սարիկ**, **չիղիկ**

-ուկ- **ճնճղուկ**, **մաքալուկ**

-ուն- **թռչուն**

Նշված ձևույթները որոշ դեպքերում գիտակցվում են որպես ածանցներ, իսկ այլ դեպքերում՝ հատկապես հստակ ստուգաբանություն չունեցող բառերում, դրանց ածանցային արժեքը չի գիտակցվում: Իրանական փոխառություններում որոշ ածանցներ (**ակ**, **իկ**), կարող են լինել նաև փոխատու լեզվի միավորներ: Հունարեն փոխառություններում շատ դեպքերում առկա են հունարենին բնորոշ օժ, ԵՑ ձևույթները:

Գ) **Բարդ բառեր**. վերջիններս, սովորաբար երկարմատ կազմություններ են **թռչնանուն+այլ բառ կադապարով**: Ամենագործունը **հաւ+այլ բառ** կադապարն է՝ **արտավազդահաւ**, **երաշտահաւ**, **ժրահաւ**, **քաջահաւ**, **փորահաւ**, **տարմահաւ**, **քազադրակն հաւ**, **հաւփալ հաւալուն**, **հաւապատիք**, **հաւն արմաւ**, **քաջահաւ**: Բերենք մի քանի վկայված օրինակները ստ հարկի որոշ մեկնաբանություններով ու նկատառումներով:

Արտավազդահաւ- վկայված է Փիրոնի գործերից մեկում. «Քանզի և ոչ սրտավազդահաւսղ և ցեժղ և կամ յայնցանէ, որ ի ջուրսղ շրջին...» (Փիլ. Լին. Բ. 117): Հունարեն բնագրում **կարապ** բառն է: **Արտավազդահաւ**-ի վերաբերյալ մի նրբին դիտողություն ունի հայտնի բանասեր Ա. Վարդանյանը: Ըստ Վարդանյանի, կ՛հասօժ հունական դիցաբանության մեջ Լիդորիայի թագավորն էր, որը վերափոխվել էր կարապի: Դիցաբանական այս իրողությունը ծանոթ էր հայ թարգմանչին, և վերջինս ձգտել է պահել այդ հենքը ու փոխակերպման գաղափարը արտահայտելու համար հայ բանահյուսությունից հարմար գտել Արտավազդի մասին եղած առասպելը. «Վիշապագունք զողացան զմանուկն Արտավազդ և դեւ փոխանակ նորա երին»: «Հետևաբար, նկատում է Ա. Վարդանյանը, կ՛հասօժ-ի այլակերպումին դեպքը հայ ականջին յարմարապես բացատրելու միակ բառը հայ դիցաբանութեան մէջ կըղմէ

¹⁸ Տե՛ս Արմ., **Մանգաղ** բառահողվածը:

¹⁹ Տե՛ս J. Greppin, նշվ. աշխ., էջ 160:

²⁰ Տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1920, էջ 281-282:

թարգմանիչը **Արտաազի** ու կկերտե իր շատ սիրուն **արտաազգահաւ** բարորութիւնը»²⁰:

Տարմահաւ- առաջին բաղադրիչը **տարմ** «երամ» բառն է: **Տարմահաւ**-ը վկայված է «Վեցօրեայուն»։ «Եւ կամ զհարոյ դարձեալ տարմահաւն եւ սարիկն, յորժամ առնուն հրաման զմեզ բժշկելոյ ի հարուածոցն եւ զնոսա սատակել կորուսանել, զան հասանեն յանկարծակի ի վերայ և ապականեն» (Վեցօր., էջ 279): Հունարեն բնագրում, ըստ Գրեպպինի, միայն **սարեակ** է (ΣΑΡΕΙΚΙΟ): Նա միաժամանակ գտնում է, որ տարմահաւը և սարեակը նույն թռչունի տարբեր տեսակներ են²¹:

Հաւփալ (գրվում է և հաւբալ, հոբալ, հովփալ, հոփալ): Ըստ ՆՀԲ-ի նշանակումն է «վայրի աղավնի»: **Փալ**- ձևույթը Ջ. Գրեպպինը համեմատում է պարսկերեն թռչնանուններին բնորոշ- bal- ձևույթի հետ. surxbal, zangulabal, marg-i-zarribal...²²: Սա վստահելի համադրություն կլիներ, եթե նշված ձևույթով թռչնանուններ վկայված լինեին ոչ թե նոր պարսկերենում, այլ՝ միջինիրանական լեզուներում: Կարելի է ենթադրել, որ **փալ**-ը V դարից վկայված **փաւ** «մի տեսակ թռչուն» բառն է, որի ծագումն ստույգ չէ:

Հաւապատիր- վկայված է Աստվածաշնչում. «Եւ հաւապատիր և հողամաղ և քաջահաւ...» (Գեւտ. ԺԱ. 17): Աստվածաշնչի մեկ այլ գրքում համապատասխան հունարեն բառը թարգմանվել է **ագոսա**. «Եւ քաջահաւ և զտխակ և զագոսա...» (Երկր. Օր. ԺԳ. 17): Ջ. Գրեպպինը, համեմատելով Աստվածաշնչի եբրայերեն, հունարեն և հայերեն բնագրերը, նկատում է, որ հուն. համապատասխանակ-ի դիմաց հայերենում անկա են **հաւապատիր** (1), **բու** (1), **ագոսա** (2)²³: Իսկ ՆՀԲ-ն **հաւապատիր** մեկնում է «գիշերաբու, ազգ բուռ, որ ըստ յունաց գիշերային ագոսա ասի»:

Այլ բառ-թռչնանուն կադապարով են կազմված հետևյալ բառերը. **գիշերաբու**, **ցախսարեկ**, **գետարծուի**, **արջնագոսա**: **Ցախսարեկ** և **արջնագոսա** ուշ շրջանի վկայություններ են: **Գետարծուի** հուն. համապատասխանակն է՝ αλιόετος բառացի «ծովարծիվ»: **Ծով** բաղադրիչով թռչնանուններ վաղ գրաբարում թերևս չկան, իսկ միջին հայերենում ունենք **ծովորոք**, **ծովարտոյտ**, **ծովարծուի**, **ծովագոսա**...: **Ծով**, **գետ** բառերը այսպիսի կազմություններում ունեն **ջուր**, **ջրավազան** իմաստը. հմմտ. **ծովագոսա/ջրագոսա**:

Ոչ թռչնանուն+ոչ թռչնանուն=թռչնանուն կադապարով կազմությունները գրաբարում մեծ թիվ չեն կազմում. **Ասրատակ**, **հոլամուկ**, **հողամաղ**, **ձկնքաղ**, **ձկնկուլ**, **մաշկաթի**:

Ասրատակ-ը մեկ անգամ վկայել է Մագիստրոսը: Ըստ Արմ-ի կազմված է **ասր+տակ** բառերից: Նույնն է, ինչ որ միջ. հայ. **բրրոռ**²⁴:

Հողամաղ- վկայված է V դարից. «Եւ հաւապատիր և հողամաղ և քաջահաւ» (Գեւտ. ԺԱ. 11): Միջինհայերենյան շրջանից գործառող արօր թռչնանունը թերևս ստեղծվել է **հողամաղ**-ի իմաստային համաբանությամբ:

Ասղակտուց- վկայված է VII դարից²⁵:

Հիմնական գծերով ներկայացնելով գրաբարի թռչնանունների բառակազմական, բառիմաստային, գործառական յուրահատկությունները՝ նկատենք, որ հարցի համակարգային և ամբողջական քննության համար անհրաժեշտ է ներառել հայերենի բոլոր լեզվավիճակների ընձեռած տվյալները, որը այլ խնդիր է: Գրաբարյան նյութը այդօրինակ ուսումնասիրության հենք կարող է լինել:

ՀԱՄԱՌՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արմ.- Հ. Աճառյան- Հայերեն արմատական բառարան, հ. 1-4, Երևան, 1971-1979:

Եմես. մեկն.- Եւսեբիոսի Եմեսացոյ Մեկնութիւնք, Վենետիկ, 1980:

ՆՀԲ.- Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

ՊԻՏ.- Գիրք պիտոյից. աշխատասիրությամբ Գոհար Մուրադյանի, Երևան, 1993:

²¹ Տե՛ս J. Greppin, նշվ. աշխ., էջ 189:

²² Տե՛ս նույն տեղը, էջ 134:

²³ Տե՛ս նույն տեղը, էջ 242:

²⁴ ՆՀԲ-ն բերում է և **ասրատակ** թռչնանունը, իսկ Ջ. Գրեպպինը այդ վկայության հիման վրա հիշյալ բառը համարում է իրան. փոխառություն (տե՛ս Գրեպպին, նշվ. աշխ., էջ 50): Անշուշտ, **Ասրատակ**-ը **ասրատակի** աղավաղ ձևն է, և գիտականի բերած զուգահեռն էլ չի հիմնավորվում:

²⁵ Տե՛ս Արմ., Ասեղն բառահոլվածը:

Վեցոր.- Բարսեղ Կեսարացի. Յաղագս վեցարեայ արարչութեան. աշխատասիրությամբ Կիճ Մուրադյանի, Երևան, 1984:

Փիլ. Բանբ.- Փիլոնի Երրայեցոյ Բանբ երեք..., Վենետիկ, 1822:

Փիլ. լին.- Փիլոնի Երրայեցոյ Մնացորդք Ի Հայս, Կ. Ք., Վենետիկ, 1826:

Ա. Տ. ՕՎԱՆՆԻՏՅԱՆ - Семантическая группа наименований птиц в древнеармянском языке (семантико-функциональное и словообразовательное исследование).- Количество наименований птиц в древнеармянском языке значительно меньше, чем в среднеармянском. Общие наименования пернатых: քոչուն, քեաւոր, հաւք, օգազնաց.

Значительное количество названий птиц является индоевропейскими: ազուտ, աղանի, արծուի, արաղաղ, լոր, կռունկ, սագ, ցին, ուրուր... Иранскими заимствованиями являются: արմաւ, բազէ, սարեակ, սիրամարգ, վարուժան... Названия птиц, заимствованные из греческого и семитских языков, всегда воспринимались как чужеродные: шајը, шриին, նէսու, փալկոն, կիկնու...

Древнеармянские названия птиц имеют следующие словообразовательные структуры:

- а) корневые слова или воспринимаемые как таковые (հաւ, ցին, սագ),
- б) корень + морфема (աապուճակ, աղանի, ճնճղու...),
- в) двукорневые структуры, которые реализуются с помощью следующих подструктур:
а) наименование птицы + другое слово = наименование птицы (փորահաւ, քաջահաւ, հաւապատիր), б) сочетание двух слов, ни одно из которых не является наименованием птицы (աւրատակ, խաղողէփեաց, հոլամուկ, հողամաղ).